

խէր քիւ ձիուն յըմեն ճար ու ճամբարս շանք է տուի, ձին
գտի յըմեն:

177. Գաւիթն է, ձին կը քշի կերթայ:

Կերթայ, կը խասնի կաթնաղբուր:

Էն տե ձին կանգնի: Գաւիթ մէկ ըւրքէպ կը զարկի.

Վուր ըւրքէպ կը զարկի, ձիուն շա՛տ ցաւ կտայ, կըսի.

178.— Գաւիթ, քի կտամ էրէգահան դէմ, քի կը վառնիմ:

Գաւիթ կըսի.— Իս կը խաղամ քիւ փուրի տակ:

Կըսի.— Քի կը զարկիմ գետին, կըյլրիմ:

Կըսի.— Իս կը խաղամ քիւ քեամակ.

Կըսի.— Քիւ խրեօխպէր քի ինչ շարեյաթ¹ էրայ:

Վուր սկուն էսայ, ընկնաւ Գաւիթ մնաք.

Գաւիթ ձիու էրկու ահանջի մէջ պագնից:

179. Ձիուց էջաւ տակ, յիւր ձեռ, երեսը լուաց:

Ձիու կեամ բերնէն խանից:

Ըզինքը նստաւ, էն տե խաց կերաւ.

Ձին էլ էն տեղ էրեծաց.

Խաց կերաւ, պրծաւ, էնտե պառկաւ, քնաւ:

180. Քնաւ, ագախաւ, տտաւ քիչ ի մնացի քեամար

կառուի, քիչ ի մնացի էնու բշկոժքիր² յըմեն կտառին.

էնու շլվար վուր եօթ տեղով կապերի, քիչ ի մնացիը
վուր կապեր կտառուին:

Ճզմէն էլ սկուն է կքիր, էն գիտի վուտ բրին³ է.

Բշկոժքիր յըմեն կը պոժուցի:

Ճզմէն գեօռով քեշի վուտից դիւս.

Քեամար մէջքէն կը յարձկի.

Գեօրտիկ թիվքիրուց կը խանի.

Խաչն թիվքիրուց կը յարձրի:

Գիւտիկ գըլխուց կը թալի,

Էգա բանբակ յըմեն կիւտից կը խանի, լցի գետըն.

Կիւտիկ անճաղ գեօռով մտուցի գըլեօխ:

Գեօրտիկ Աթմանին կը խագնը.

Քշկոժքիր անճաղ կը գեայ, կը բըշկոժի:

Քամարն մէկ փաթ կը բերի.

Անճաղ յերար կը խառուցի.

Շլվարն կը խագնի, հալա ուր նեղ է:

Ճզմէն, բանբակ յըմեն կը խանի, գարարկի.

Անճաղ կը մանի վուտ:

Թուր կեծակին կը կապի.

1 Կտակ, պատուէր:

2 Կոճակ:

3 Թրք.—Վէրք: